բանս այս յականջս ամբոխին, խռովեալ սասանեցան եւ պաշարեցան յերկիւղ մեծ, եւ խուճապեալ դիմեցին 'ի դրունս տաճարին զերծանիլ արտաքս. 'ի կուտել եւ 'ի խռնել ամբոխին 'ի դռնամէջս կոխեցան 'ի միմեանց, մեռան բազումք 'ի խռան անդ։ Այլ մինչդեռ սոքա խռովեալ և պատաղեալ էին զաղմկաւ իւրեանց, մի ոմն յասպետաց ոստուցեալ եւ 'ի վերայ պարսպին և կանգնեաց անդ զիսաչանիչ դրօշն, որով աւետէր զառումն քաղաքին, որում հեռեւելով և այլոց՝ խուժեցին 'ի ներքս եւ յարձակեալ 'ի տաճար անդր 'ի մզկիթն Ագսայ՝ կոտորեցին զբազմութիւնս ապաստանելոցն ոգիս իբրեւ 65,000. ըստ տոհմային Պատմագրաց եւ ըստ Արաբացւոց 70,000, յորոց բազումք 'ի գիտնոց և 'ի մեծամեծաց դասէ էին, թող զայլ խառնիճաղանճս որք մեռան 'ի քաղաքամիջի եւ արտաքոյ նորին եւ 'ի դրունս տաճարին։ Ահա այսպէս առաւ մայրաքաղաքն Հրէաստանի յայս նուագ եւս, եւ ազատեցան Ս. Տեղիքն 'ի 15 Յուլիսի 1099 յամին եւ յաւուր Ուրբաթու, զկնի կէս աւուր ժամ իբրեւ ինն երորդ։ Յաւելու Արաբացի պատմիչն թէ աւարի առին Լատինք ըզզարդս մզկթաց, որք մնացեալ էին յաւուրց անտի Ատիւլ Մէլիք Խալիֆային Դամասկոսի, յորս նշանաւոր էին 2040 կանթեղք արծաթի, որոյ մին կշռէր 3600 տրամ և մի ջահ 40 լիտր Դամասկոսի. եւ 23 կանթեղք ոսկի. (եթէ չիցէ չափազանց)։ Յետ այնորիկ մաքրեցին Լատինք զմզկիթն զայնոսիկ եւ փոխեցին յեկեղեցի. կանգնեցին սեղան պատարագի 'ի վերայ Սախրայ կոչեցեալ վիմին և Խաչ ոսկեճոյլ 'ի գլուխ գմբէթի նորին։ Եւ զկնի ութ աւուր կացուցին թագաւոր Երուսաղէմի զնոյն ինքն զԿոնդոսրէ եւ նուիրեցին նմա զինակից ասպետքն զթագ ընտելուզեալ ակամբք պատուականօք, այլ նա ոչ երբէք ա՛ռ յանձն կրել զայնպիսի թագ 'ի գլուխ իւր անդ՝ ուր Յիսուս Քրիստոս պսակեալ էր փշեայ թագիւ։

Էառ Կոնդոսրէ նաեւ զծովեզերեայ քաղաքն Յոպպէացւոց եւ պարսպեալ ամրացոյց զնա, ուր Նստան եպիսկոպոսք Լատինաց. երաց զդրունս առաջի նորա եւ քաղաքն Սամարացւոց, որ ասի Նապղուս։ Եւ զկնի տարածեալ զզէնս իւրեանց տիրեցին այլոց գաւառաց և քաղա-